ԳԼՈՒԽ ՅԶԱ.

Ո՛չ ոք ունիցի իշխանութիւն հարկանել կանայս բայց յիշխանք համեմատութեան վճռոյ դատաստանի վասն գործոց ձեռաց մեղայ նոցայ, և այրն ամուսնացեալ կնոջ 'ի տեղի փափուկ մսոյ, և զգուշութեամբ զի մի վիրաւորեսցի և կամ խորտակեսցի ոսկերս կնոջ իւրոյ, մինչև երկոտասան ղամչի։

ԳԼՈՒԽ ՅԶԲ.

Ամենայն ուսուցիչք դատերայց նախ ջանասցեն ուսուցանել աշակերտքս իւրեանց ամօթխածութեամբ, և պատիժն նոցա միայն արգելուլ 'ի շարժմանէ (այս քան) ժամ ըստ արժանոյ մեղայ նորա, այլ եթէ գոցի դուստր ոմն բնութեամբ զոռոզ զի հարկեսցի սաստել զանիւք նմայ վարպետ նորայ կարող է զան հարկանել նմա ձեռամբ կանանց ղամչաւ մինչև ինն ղամչի ըստ արժանաւորութեան մեղայ և ըստ կարեաց անդամոյն մեղաւորի զգոյշ լինիլ զի մի վիրաւորեսցի, յատկապէս պատկերն նորայ, և մի փշրեսցի ոսկերս և մի մտցէ 'ի սիրտ նորայ յերկիւղ անփարատելի զի զրկեսցի նմա 'ի ծնանելոյ։